ՄԱԳԼԵՆ ԴԵ ԳՈՄԵԶԻ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ...» ՈՐՊԵՍ ԱԲԱԶԱ ՓԱՇԱՅԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ (1623—1627 ԹԹ.) ԱՂԲՅՈՒՐ

Ա. Մ. ՂԱԶԱՐՅԱՆ

Արազա փաշայի ապստամբությունը, որի գործողությունները հիմնականում ծավալվել են Հայկական բարձրավանդակում, մեծապես շոշափել է հայ ժողովրդի շահերը և մշտապես գտնվել հայագետների ու արևելագետների[1] ուշադրության կենտրոնում։ Այս առումով, յուրաքանչյուր նոր աղբյուրի ի հայտ բերում և արժեքավորում կարևոր նշանակություն ունի ինչպես հայագիտության, այնպես էլ արևելագիտության համար։ Այդ աղբյուրների շարքին է պատկանում Մագլեն դե Գոմեզի «Օսմանի՝ անվամբ առաջին, 19-րդ թուրք սուլթանի և կայսրուհի Աֆենդինա Ասադի պատմություն» վերնագրով աշխատությունը[2], որը արժեքավոր տեղեկություններ է պարունակում XVII դ. առաջին քառորդում թուրք-լեհական հարաբերությունների, ենիչերական կորպուսի մարտունակության աստիճանական անկման, սուլթան Օսման II-ի (1618—1622 թթ.) սպանության, Աբազա փաշայի ապստամբության և այլ հարցերի վերաբերյալ, որոնք բացակայում են այլ աղբյուրներում։

Մ. դե Գոմեզի աշխատությունը գրված է XVII դ. Կոստանդնուպոլսի ֆրանսիական դեսպաններ Բարոն դե Սալինյակի, Աշիլ դե Հարլի Սենսիի, Բարոն դե Մոլեի և դե Հարլի Կոնտ դե Սելիի զեկուցագրերի հիման վրա, որոնք քաջատեղյակ լինելով սուլթանական պալատում ծագած խոր հակասություններին, պալատական խմբավորումների վարած քաղաքականությանը, հավաստի ու մանրամասն ներկայացրել են կայսրության սոցիալ-քաղաքական վիճակը[3]։

Օգտագործելով այդ զեկուցագրերում տեղ գտած վկայությունները, համեմատական զուգահեռներ ենք անցկացրել դրանց և հայկական[4], թուրքա-

---

1 Մ. Կ. Զուլալյան, Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966, Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 2, Երևան, 1959, А. С. Тверитинова, Восстание Кара Языджи-Делн Хасана в Турции, М.—Л., 1946; А. Д. Новичев, История Турции (эпоха феодализма), Л., 1963; М. А. Гасратян, С. Ф. Орешкова, Ю. А. Петросян, Очерки истории Турции, М., 1983.

2 Histoire d' Osman premier du nom, XIXe empereur des Turcs et de l,imperatrice Aphendina Ashada, par Madame de Comez (այսուհետև՝ Gomez, Histoire), Amsterdam, 1734, t. 1, 2.

3 Նույն տեղում, հ. 1, էջ 145։

4 Գր. Դարանաղցի, ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, հրատ. Մ. Նշանեան, Երուսաղեմ, 1915, Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, սակս դիպուածոց Հայաստանեայց և գաւառին Արարատայ և մասին Գողթան գաւառին սկսեալ ի ՌԾԱ թուականին Հայոց մինչև ի ՌՃԺԱ թ., Վաղարշապատ, 1896, Ե. Քեօմիւրճեան, Պատմութիւն համառօտ ԴՃ տարւոյ օսմանցոց թագավորացն, աշխատասիրությամբ Ժ. Ավետիսյանի, Երևան, 1982, Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարանները (այսուհետև՝ Հիշատակարաններ), կազմեցին Վ. Հակոբյան, Աշ. Հովհաննիսյան, հ. Ա, Երևան, 1974, հ. Բ, Երևան, 1978, Մանր ժամանակագրություններ 13—18-րդ դարերի, կազմեց Վ. Հակոբյան, հ. 1, Երևան, 1951, հ. 2, Երևան, 1956, Սիմէոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն, հրատ.՝ Հ. Ակինյան (Հանդէս ամսօրյա, 1934, № 3—4 և 1935, № 7—9), նույնի՝ Путевые заметки (сост. комм. снабдил Л. Дарбинян, М., 1965), Հ. Կամենացի, Պատմութիւն պատերազմին Խոթինա, հրատ.՝ Հ. Անասյան, Երևան, 1964։

կան[5] ու այլ աղբյուրների հաղորդած վկայությունների միջև։ Նշենք, որ սույն հոդվածում ընդգրկված աղբյուրագիտական տվյալները մեծապես լրացնում են վերը նշված աղբյուրներին և առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ։

XVI դ. մայրամուտը Օսմանյան կայսրության համար նշանավորվեց ցնցումների մի շրջանով, երբ պետական ապարատը գտնվում էր կազմալուծման եզրին, պալատը բաժանված էր ընդդիմադիր խմբավորումների, պալատում և ողջ երկրում ծաղկում էր կաշառակերությունը, տնտեսական կյանքը գտնվում էր ճգնաժամային վիճակում, կենտրոնական կառավարության քաղաքականությունից դժգոհում էին ինչպես խոշոր, այնպես էլ մանր ու միջին դիրքի ֆեոդալները, գյուղացիությունը ծայր աստիճան աղքատացել էր և անկարող էր վճարել անշեղորեն աճող հարկերը։ Մյուս կողմից, եվրոպական ու արևելյան ճակատներում միաժամանակյա մղվող պատերազմները չլատել էին օսմանյան ռազմական ուժերը, քայքայել երկրի ֆինանսատնտեսական վիճակը[6]։ Այս պայմաններում սուլթան Ահմեդ I-ը (1603—1617 թթ.) մեծ ճիգերի գնով կարողացավ ճնշել ջալալիների ապստամբությունը (1609 թ.), և որոշ չափով կարգավորվեց երկրի սոցիալ-տնտեսական վիճակը։ Սակայն այդ միջոցառումներն ունեցան մասնակի ու ժամանակավոր հաջողություն։

Սուլթան Ահմեդ I-ի մահվանից հետո (1617 թ.), նրա կտակի համաձայն, երկրի կառավարումը պետք է հանձնվեր իր եղբորը՝ Մուստաֆային, մինչև գահի օրինական ժառանգորդ Օսմանի չափահաս դառնալը։

Սուլթան Մուստաֆայի օրոք (1617 թ. նոյեմբեր—1618 թ. փետրվար) ողջ իշխանությունը կենտրոնացած էր իր մոր ու նրան հարող խմբավորման ձեռքին, և որևէ փոփոխություն տեղի չունեցավ երկրի տնտեսական, քաղաքական կյանքում։ XVII դ. I քառորդին Օսմանյան կայսրության առջև կանգնած մի շարք կարևորագույն խնդիրների (երկրի ֆինանսատնտեսական վիճակի բարելավում, նորանոր ռազմական հաղթանակների ապահովում արտաքին քաղաքական ասպարեզում և այլն) լուծման ուղիների ընտրության հարցում պալատական վերնախավը բաժանվեց երկու անհաշտ, ընդդիմադիր խմբավորումների։ Այս խմբավորումներից առաջինը, որն իր շարքերում ընդգրկում էր հետադիմական հոգևորականությանը, պալատական բարձր պաշտոնյաներին, գահաժառանգ Մուրադի մորը (սուլթանուհի Քյոսեմ) և այլոց, նպատակ ուներ գահ բարձրացնել այնպիսի սուլթանի, որը չխանգարեր իրենց՝ միջամտելու կայսրության տնտեսական և քաղաքական գործերին. շարունակել պաշտոնների առուծախը, երկրի ֆինանսները կարգավորել գյուղացիության բացարձակ կողոպուտի ու նորանոր հարկերի ավելացման միջոցով։ Հակառակ սրան, պալատական մյուս խմբավորումը, որն իր շարքերում ընդգրկում էր նոր գահ բարձրացած պատանի սուլթան Օսման II-ին,

5 Թուրքական աղբյուրները Հայաստանի հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին (այսուհետև՝ Թուրքական աղբյուրներ), կազմեց՝ Ա. Խ. Սաֆրաստյան. հ. Ա, Երևան, 1961, հ. Բ, Երևան, 1964, է. Չ ե լ ե բ ի, Ուղեգրություն, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրությունները՝ Ա. Խ. Սաֆրաստյանի, Երևան, 1967։ Э. Челеби, Книга путешествий, вып. 3—Земли Закавказья и сопредельных областей Малой Азии и Ирана, пер., пред., комм. Ф. М. Алиева, А. Д. Желяткова, М. К. Зулаляна, Г. В. Путуридзе, М., 1983; «Джихан Нюма» и «Фезлехе» Кятиба Челеби как источник по истории Армении (XVII в.), пред., пер. и коммен. А. А. Папазян, Ереван, 1973; Х. Т у г а, «Ибрегнюма» и донесения польских послов Сулишского и Збаражского (см. Османская империя в первой четверти XVII века, сб. докум. и матер., сост. Х. М. И б р а г и м б е й л и, Н. С. Р а ш б а, М., 1984).

6 А. С. Т в е р и т и н о в а, նշվ. աշխ., Մ. Կ. Զ ո ւ լ ա լ յ ա ն, նշվ. աշխ., Ն ո ւ յ ն ի՝ Արևմտյան Հայաստանը XVI—XVIII դարերում, Երևան, 1980, J. H. U z u n ç a r ş ı l ı, Osmanlı Tarihi, c. I—IV, Istanbul, 1947—1959, M. A k d a ğ, Osmanlı Imparatorluğunun kuruluş ve inkisadı devrinde Türkiyenin iktistadı vaziyeti (Belleten, c. 1—XIII. 1942, № 51—55), Ն ո ւ յ ն ի՝ Celali isyanları. Ankara, 1963 և այլն։

ինչպես նաև պալատի որոշ պաշտոնյաների և ծայրամասի որոշ նահանգապետերի, հանդես եկավ բարեփոխումների՝ ըստ էության դժվար իրագործելի ծրագրով։ Սուլթան Օսման II-ը այդ մասին հայտարարեց թուրքլեհական պատերազմից հետո տեղի ունեցած Դիվանի նիստում։ Ծրագրվում էր.

ա) գրավել կենտրոնական Եվրոպայի երկրները, դուրս գալ Բալթիկ ծով, հիմնել նավատորմ. բ) ոչնչացնել անհնազանդ ենիչերիների ու սիփահիների կորպուսը՝ նրանց փոխարեն բանակ զորակոչելով արաբներին ու թուրքմեններին, որոնք խիզախությամբ ու հավատարմությամբ աչքի ընկան թուրքլեհական պատերազմում։ Սուլթան Օսմանը Մեքքա ուխտի գնալու պատրվակով մտադրվել էր ենիչերիներին տանել Արաբիայի անապատները, ուր արաբական զորքերը՝ Դամասկոսի ու Կահիրեի փաշաների գլխավորությամբ պետք է ոչնչացնեին նրանց. գ) մայրաքաղաքը Կոստանդնուպոլսից տեղափոխել Կահիրե*. դ) բարձր հոգևորականության տնտեսական ու ֆինանսական կարողությունն ու ազդեցությունը չեզոքացնելու նպատակով նրանց հեռացնել պետական գործերի կառավարումից. ե) փոխել տարասր և այլն[7]։ XVII դ. Օսմանյան կայսրությունում այսպիսի արմատական բարենորոգումների իրականացումը պետք է հանդիպեր հետադիմական հոգևորականության ու խոշոր պետական պաշտոնյաների կատաղի դիմադրությանը, որոնք այդ պայքարում օգտագործեցին ենիչերիների ռազմական ուժը։

XVII դ. 20-ական թվականներին Օսմանյան կայսրության սոցիալ-քաղաքական կյանքի առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ չնայած զգալիորեն ընկել էր ենիչերական կորպուսի մարտունակությունը, այդուհանդերձ անհամեմատ ուժեղացել էր նրա քաղաքական դիրքը[8], և նրա ուժը այժմ արդեն օգտագործվում էր ոչ միայն պատերազմներում հաղթանակներ ապահովելու, այլև երկրի ներսում այս կամ այն քաղաքական գիծը իրականացնելու համար։

Հենց վերը նշված պալատական խմբավորումը օգտագործեց այդ ազդեցիկ ռազմական ուժը, գահընկեց արեց և մահվան դատապարտեց պատանի սուլթանին՝ կրկին գահ բարձրացնելով խելակորույս Մուստաֆա I-ին։ Այս պայմաններում, ոգևորված սուլթան Օսման II-ի այրու՝ Աֆենդինայի՝ նահանգի փաշաներին հղած նամակից (ի դեպ, հայ ժամանակագիր Գր. Դարանաղցու վկայությունը, որ նամակը գրել է վալիդե սուլթանուհին՝ սուլթան Օսմանի մայրը, սխալ է)**, ծայրամասի նահանգապետերը սկսեցին բացահայտորեն հրաժարվել կենտրոնական կառավարությանը հնազանդվելուց և ապստամբության որոշ բարձրացրին։

Կայսրության տարածքում սուլթան Օսման II-ի կողմնակից խոշոր ֆեոդալների բարձրացրած ապստամբությունների շարքում իր ուժգնությամբ ու թափով աչքի է ընկնում Էրզրումի բեյլերբեյ Աբազա փաշայի ապստամբությունը, որը, շարունակելով սուլթան Օսման II-ի գործը, կտրուկ ու խստագույն միջոցներ ձեռնարկեց վերջնականապես սաստելու ենիչերիներին, կանխելու քաղաքական գործերին միջամտելու նրանց մտադրությունը՝ վերջին-

---

* Թուրք պատմաբան Դանիշմենդը վկայում է, որ պետության մայրաքաղաքը պետք է տեղափոխվեր Անատոլիա (տե՛ս J. H. Danişmend. Izahlı Osmanlı tarihi kronolojisi, Istanbul, 1961, c. III, s. 292).

[7] Gomez, Histoire, t. 2, p. 90, հմմտ. Դարանաղցի, նշվ. աշխ., էջ 205—207։

[8] J. H. Uzuncarşılı, Osmanli devleti teskilâtiarından.kapıkulu ocakları, c. 1—2, Ankara, 1943—1944. Ուշադրությունը ենիչերական կորպուսի մարտունակության անկման գործում ամբողջ մեղքը բարդում է դեշիրմենների վրա, որոնցով համալրվում էին ենիչերիները։

** Գր. Դարանաղցի, նշվ. աշխ., էջ 226—227։

ներիս մեղադրելով տիրապետության մեջ, նրանց համարելով «կայսրության թշնամիներ»[9]։

Նախքան ապստամբությունը, Աբազա փաշան նամակագրական կապերի մեջ է մտնում հարևան խոշոր ֆեոդալների ու նահանգապետերի հետ՝ կոչ անելով միանալ իրեն, չենթարկվել կենտրոնական կառավարության հրովարտակներին և իրենց տիրապետության տարածքում կոտորել բոլոր ենիչերիներին, վրեժխնդիր լինելով նրանցից սուլթան Օսմանի ողբերգական սպանության համար[10]։ Աբազա փաշայի առաջարկը հավանության է արժանանում Փոքր Ասիայի մի շարք թուրք ֆեոդալների կողմից։ Այս փաստը արձանագրված է նաև հայ ժամանակագիր Ա. Խարբերդցու մոտ։

Մեծ մեծ խաներ առ ինքն եկան
Եւ պարոնայք ամենեքեան
Ըստ նմա եղան միաբան,
Թէ ուր է մեծ արբայն Օսմանն[11]։

Թուրք պատմիչ Ք. Չելեբու վկայությամբ Աբազա փաշային միացել են Մարաշի բեյլերբեյ Կլավուն Յուսուֆ փաշան և Սվազի թայար Մուստաֆա փաշան[12]։

Նշենք, որ ֆրանսիական դեսպանների զեկուցագրերում տեղեկություններ չկան այն մասին, թե ինչպես է սկսվել Աբազա փաշայի ապստամբությունը և բացի այդ բացակայում են ապստամբական բանակի և կառավարական պատժիչ զորքերի միջև կայացած ճակատամարտերին վերաբերող տվյալները։ Սակայն կարևոր է այն վկայությունը, որ Աբազա փաշայի ապստամբությանը մասնակցել են մեծ թվով գյուղացիներ[13]։

Գր. Դարանաղցու հավաստմամբ Աբազա փաշայի ապստամբության անմիջական շարժառիթը Էրզրումի շրջանի գյուղացիության բողոքն էր տեղացի ենիչերիների բռնություններից ու խժդժություններից[14]։

Ըստ Մ. դե Գոմեզի, Աբազա փաշան 40000 զորքի գլուխ անցած պաշարում է Ակհիսարը, որը գրավելուց հետո մահապատժի է ենթարկում քաղաքը պաշտպանող 8000 ենիչերիների[15]։ Այնուհետև Աբազա փաշան պաշարում է Կարահիսարը, որը գրավելուց հետո սրի է քաշում 15000 ենիչերիների ու սիփահիների։ Թուրքական աղբյուրների վկայությամբ, Կարահիսարի բերդապահ Մուրթազա փաշան միանում է Աբազա փաշային[16]։

Պաշարված էր Կարահիսարը, երբ իր հեղինակությունը ապստամբական բանակի շարքերում և կայսրության ողջ տարածքում բարձրացնելու համար Աբազա փաշան երկրի տարբեր մասերն ուղարկեց սուլթան Օսմանի ուղերձը, որը մզկիթում կայացած մի հանդիպման ժամանակ Աբազային դիմել էր հետևյալ խոսքերով. «Մեծ մուսուլմաններ, իմ ծառաներից ամենահավատա-

---

[9] Gomez, Histoire, t. 2, p. 187—188. Արազա փաշայի ապստամբության մասին մանրամասն տես Մ. Հ. Զուլալյան, նշվ. աշխ., էջ 191—216, նույնի՝ Обстоятельства восстания Абаза паши в Эрзруме по армянским источникам (Тюркологический сборник, М., 1978, с. 151—157).

[10] Gomez, Histoire, t. 2, p. 187—188.

[11] Հիշատակարաններ, հ. Բ, էջ 125։

[12] Թուրքական աղբյուրներ, հ. Բ, էջ 104։

[13] Gomez, Histoire, t. 2, p. 224.

[14] Գր. Դարանաղցի, նշվ. աշխ., էջ 216, հմմտ. Թուրքական աղբյուրներ, հ. Ա, էջ 82։ Թուրք պատմարան Մ. Ակդաղի բերած արխիվային տվյալների համաձայն, նահանգներում տեր ու տնօրեն դարձած ենիչերիները սկսել են կամայական հարկեր սահմանել, որոնք գանձվել են դրամով և հասել մեծ չափերի (տե՛ս M. Akdağ, Celali isyanları, s. 265, vesika 11, հմմտ. Симеон Лехаци, նշվ. աշխ., տե՛ս նաև И. Е. Петросян, Янычарские гарнизоны в провинциях Османской империи (Османская империя, М., 1986).

[15] Gomez, Histoire, t. 2, p. 191.

[16] Թուրքական աղբյուրներ, հ. Ա, էջ 83, հ. Բ, էջ 104։

րիմներ, վրեժ լուծեք 60 000 ենիչերիներից իմ մահվան համար։ Շտապեցեք, թող հաջողությունը ուղեկցի ձեզ և հաղթանակով պսակի ձեր նախաձեռնությունը»[17]։

Սուլթանական կառավարությունը, տեղի տալով կատաղած ենիչերիների բողոքներին, Աբազա փաշայի դեմ պատժիչ զորքեր է ուղարկում Ջղալ փաշայի գլխավորությամբ*։ Կեսարիայի դաշտում կառավարական զորքերի և ապստամբական բանակի միջև տեղի ունեցած ճակատամարտում Աբազա փաշայի զորքը պարտվում է և վերջինս փախչում ու պատսպարվում է Էրզրումի բերդում։ Իսկ 1624 թ. վերջերին պատժիչ զորքի հրամանատար մեծ վեզիր Մահմուդ փաշայի և Աբազա փաշայի միջև սկսված բանակցությունների հետևանքով Աբազա փաշային կրկին հանձնվում է Էրզրումի բեյլերբեյությունը, իսկ վերջինս համաձայնվում է բերդում թողնել 2000 ենիչերիների[18]։ Այս դրությունը չարունակվում է ընդհուպ մինչև 1627 թվականը։ Այս մասին զեկուցագրերում տեղեկություններ չկան։ Սակայն վկայություններ կան այն մասին, որ Կոստանդնուպոլսում փոխվում է ուժերի հարաբերակցությունը, և սուլթան Օսման II-ի համախոհներին հաջողվում է 1623 թ. սեպտեմբերի 23-ին գահ բարձրացնել սուլթան Մուրադ IV-ին (1623—1640 թթ.), որը հայտարարում է, որ իր հիմնական նպատակն է կարգավորել երկրի փոթորկահույզ վիճակը և վրեժխնդիր լինել սուլթան Օսման II-ի սպանողներից[19]։

Սուլթան Մուրադ IV-ի մայրը՝ Քյոսեմը, իր որդու գահակալության ըսկզբնական շրջանում անմիջական մասնակցություն ուներ երկրի կառավարմանը։ Գիտակցելով, որ Աբազա փաշայի և նրա համախոհ ֆեոդալների ապըստամբությունը վերջնականապես ճնշված չէ, նա հորդորում է Աֆենդինային՝ նամակ գրել վերջիններիս՝ հնազանդության կոչ անելով։ Աֆենդինայի՝ Աբազա փաշային հղած նամակում նշվում էր հետևյալը. «Ես կարծում եմ, որ չեր մերժի զենքը ցած դնելու իմ առաջարկը և կպայքարես Մեծ Օսմանի եղբոր և գահի օրինական ժառանգորդ սուլթան Մուրադի թշնամիների դեմ, որն Աստծո կամոք գահ բարձրացավ։ Նորին մեծությունը գնահատում է քեզ։ Եթե ուզում ես, որ Անատոլիան խաղաղվի, ընդունիր իմ առաջարկը»[20]։

Այս նամակից հետո մեծ թվով ապստամբած ֆեոդալներ, գիտակցելով, որ իրենց նպատակին հասել են, զենքը ցած են դնում։ Սակայն Աբազա փաշան, երբ տեղեկանում է, որ սուլթանուհի Քյոսեմը պարսկական արշավանքի մեկնող ենիչերիներին (խոսքը վերաբերում է 1627 թ. դեպի Ախալցխայի բերդը արշավող Դիշլենկ Հյուսեին փաշայի զորքին) գաղտնի հրահանգ էր տվել սպանել իրեն, կրկին ապստամբություն է բարձրացնում՝ ապստամբական բանակի կոչ հռչակելով՝ «Կեցցե սուլթան Մուրադը, մահ՝ սուլթան Օսմանի սպանողներին»[21]։

Ի դեպ, այս մասին թե՛ թուրքական, թե՛ հայկական աղբյուրներում տեղեկություններ չկան։

Կառավարական պատժիչ զորքի և Աբազա փաշայի զորքի միջև տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ Աբազան փայլուն հաղթանակ է տանում, իսկ գերի ընկած Դիշլենկ Հյուսեին փաշան, ինչպես նաև 8000 ենիչերիներ ու 4000 սիփահիներ սրի են քաշվում[22]։ Այս հաղթանակից անմիջապես հետո Աբազա փաշան զեկուցագիր է ուղարկում սուլթան Մուրադին և Դիվանի անդամներին, որտեղ նշում էր, որ ինքը փառասիրական ոչ մի նկրտումներ չու-

---

17 Gomez, Histoire, t. 2, p. 189.

* Թուրքական բանակի հրամանատարն էր Ջղալոզլի Սինան փաշայի որդի Մահմուդը (տե՛ս J. H. Danismend, նշվ. աշխ., հ. 3, էջ 331, Մ. Կ. Ջուլալյան, նշվ. աշխ., էջ 205)։

18 Թուրքական աղբյուրներ, հ. Ա, էջ 83, հ. Բ, էջ 104։

19 Gomez, Histoire, t. 2, p. 205.

20 Նույն տեղում, հ. 2, էջ 219։

21 Նույն տեղում, հ. 2, էջ 216։

22 Նույն տեղում, հ. 2, էջ 224, հմմտ. Թուրքական աղբյուրներ, հ. Ա, էջ 83։

նի, իր միակ նպատակն է վրեժ լուծել Օսմանի համար[23]։ Թուրք պատմաբան Ի. Հ. Դանիշմենդի վկայությամբ, այս փաստը արձանագրված է թուրք ժողովրդական գրականության նմուշներում, ուր պահպանվել է Աբազա փաշայի քառատողը.

Մուրազս է գնալ Ստամբոլ
Ու կարգավորել գահը օսմանյան,
Լինել սուլթան Մուրադ խանի վեզիրը,
Եթե մեռնեմ դրանից հետո՝ ցավ չէ ինձ համար[24]։

Իսկ Աֆենդինային ուղղված նամակում Աբազա փաշան հայտնում է իր մտադրությունը՝ մինչև վերջ պայքարել սուլթան Օսմանի սպանողներից վրեժխնդիր լինելու համար և ստիպել նրանց (ենիչերիներին— Ա. Ղ.) հնազանդվել և հավատարմորեն ծառայել «Օսմանների պայծառափայլ ցեղին»։

Աբազայի կարծիքով պատանի սուլթան Մուրադը չի կարող դեռևս ինքնուրույն կառավարել կայսրությունը և պալատում ունի շատ թշնամիներ, որոնք սպառնում են նրա անվտանգությանը։

Նամակում նշված էին նաև «կայսրության թշնամիների անունները»[25]։

Թուրքական աղբյուրները հաստատում են, որ սուլթան Մուրադ IV-ը ինքնուրույն կառավարել է սկսած 1628 թվականից։ Նա ցրեց թիկնապահ զորքը, կասկածելով նրա հավատարմությանը, մահապատժի ենթարկեց ենիչերական կորպուսի մի շարք բարձրաստիճան սպաների, նոր զորահավաք անցկացրեց՝ ենիչերիների ու սիփահիների զորքերը հավատարիմ մարդկանցով համալրելու նպատակով[26]։ Այս միջոցառումները հուզումների նոր ալիք բարձրացրին, սակայն Մուրադ IV-ին հաջողվեց ճնշել ենիչերիների ապըստամբությունը։

Ձեկուցագրերի վկայությամբ, Աբազա փաշան, որ մի նոր հաղթանակ էր տարել կառավարական պատժիչ զորքերի դեմ և ընդհուպ մոտեցել Կոստանդնուպոլսին, ցանկություն է հայտնել օգնելու սուլթան Մուրադին[27]։

Նույն աղբյուրների համաձայն Աֆենդինայի միջնորդությամբ սուլթանը ներում է շնորհում Աբազա փաշայի ապստամբական բանակին, որը 1500 հեծյալների գլուխն անցած մտնում է Կոստանդնուպոլիս և արժանանում պատվավոր ընդունելության։ Բացի այդ Աբազա փաշային շնորհվում է Բոսնիայի բեյլերբեյի պաշտոնը[28]։

Այս վկայությունները, թեև մոտ են իրականությանը, սակայն մեզ ավելի հավաստի են թվում թուրքական և հայկական աղբյուրների հաղորդած տեղեկությունները, որոնց համաձայն 1627 թ. սեպտեմբերի 18-ին Էրզրումի առրոցը պաշարած կառավարական պատժիչ զորքերի հրամանատար Խուսրև փաշան հարկադրում է Աբազա փաշային 6-օրյա պաշարումից հետո անձնատուր լինել[29]։ Ձեկուցագրերում վկայություններ չկան Աբազա փաշայի հետագա ճակատագրի մասին, որը 1634 թվին զոհ է գնում ենիչերիների լարած որոգայթներին[30]։

---

23 Gomez, Histoire, t. 2, p. 226—227.

24 J. H. Danişmend, նշվ. աշխ., հ. 3, էջ 317.

25 Gomez, Histoire, t. 2, p. 233.

26 Նույն տեղում, էջ 246։

27 Նույն տեղում, էջ 247։

28 Նույն տեղում, հմմտ. Գր. Դարանաղցի, նշվ. աշխ., էջ 226—227, հմմտ. նաև Մանր ժամանակագրություններ, հ. Բ, էջ 270, J. H. Danişmend, նշվ. աշխ., հ. 3, էջ 343։

29 Թուրքական աղբյուրներ, հ. Ա, էջ 64, հ. Բ, էջ 154, հմմտ. Գր. Դարանաղցի, նշվ. աշխ., էջ 224, Հ. Տաշյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 839։

30 Գր. Դարանաղցի, նշվ. աշխ., էջ 229, Հիշատակարաններ, հ. Բ, էջ 534—536, 687։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ֆրանսիական դեսպանների զեկուցագրերում արձանագրված են այնպիսի տեղեկություններ, որոնք բացակայում են մյուս աղբյուրներում (թուրքական, հայկական աղբյուրներ, բեհ դեսպանների զեկուցագրեր և այլն)։ Նկատի ունենք Աբազա փաշայի նամակագրական կապը սուլթան Մուրադ IV-ի, սուլթան Օսման II-ի կնոջ՝ Աֆենդինայի հետ։

Մյուս կողմից, ֆրանսիական դեսպանների հաղորդած տեղեկությունների շնորհիվ գաղափար ենք կազմում նշված ժամանակաշրջանում սուլթանական պալատում տեղի ունեցած անցուդարձերի, պատմական որոշակի անձնավորությունների, խմբավորումների, ինչպես նաև նրանց՝ այս կամ այն քաղաքական գծի վերաբերյալ։

Այս ամենից ելնելով կարող ենք եզրակացնել՝

ա) Աբազա փաշայի ապստամբությունը նպատակ չի ունեցել թոթափելու Օսմանյան կայսրության լուծը, այն ուղղված է եղել ոչ թե Օսմանյան գահի դեմ, այլ նպատակ է ունեցել ամրապնդել ու բարեկարգել այն, վերջ տալ ենիչերիների կամայականություններին ու խժդժություններին։

բ) Աբազա փաշայի ապստամբության գաղափարական ուղղություն տվողն ու ոգեշնչողը եղել են սուլթան Օսման II-ի կողմնակից պալատի որոշ պաշտոնյաներն ու նրա կինը՝ Աֆենդինան։

Հարկ է նշել, որ ֆրանսիական դեսպանները հաղորդում են ժամանակագրական առումով ոչ ճիշտ, երբեմն միակողմանի ու ընդհանուր տեղեկություններ, այս կամ այն հարցին տալիս կողմնակալ, ոչ օբյեկտիվ մեկնաբանություններ։ Այսպես՝ թվում է, թե զեկուցագրերում ներքին համակրանք կա սուլթան Օսման II-ի կողմնակիցների, Աֆենդինայի և հատկապես Աբազա փաշայի ապստամբության նկատմամբ։

Բացի այդ, քննվող աղբյուրում նույնացվել են պատմական երկու անձնավորություններ. սուլթան Օսման II-ի ուսուցիչը և գաղափարների ոգեշնչողը եղել է ոչ թե շեյխ-ուլ իսլամ Ասադը՝ իր կնոջ հայրը, այլ հոջա Օմեր էֆենդին։ Իսկ սուլթան Օսման II-ի ձեռնարկած միջոցառումները խոր հակասություններ էր առաջացրել իր և շեյխ-ուլ իսլամ Ասադի միջև։

Ջնայած վերը նշված թերություններին, ֆրանսիական դեսպանների հաղորդած տեղեկությունները նույնպես կարևոր են մատնանշված ժամանակաշրջանում Օսմանյան կայսրության միջնադարի պրոբլեմների խոր ու համակողմանի ուսումնասիրման համար։

«ИСТОРИЯ...» МАДЛЕН ДЕ ГОМЕЗА КАК ИСТОЧНИК ВОССТАНИЯ АБАЗА-ПАШИ (1623—1627 гг.)

А. М. КАЗАРЯН

Резюме

Восстание Абаза-паши, действия которого в основном проходили на территории Армянского нагорья, всегда находилось под пристальным вниманием арменоведов и востоковедов.

В этой связи выявление новых источников имеет важное значение как для арменоведения, так и для востоковедения.

К этим источникам относится труд Мадлена де Гомеза, изданный в Амстердаме в 1734 г.

Он написан на основании донесений французских послов Константинополя в первой четверти XVII в. и содержит достоверные данные о турецко-польских отношениях, постепенном снижении боеспособности янычарского корпуса, убийстве султана Османа II (1618—1622 гг.), восстании Абаза-паши, отсутствующие в турецких и армянских источниках того периода. В донесениях французских послов есть такие сведения, которые не освещены в других источниках.